

## GENDER DIFFERENCES OF COGNITIVE AND MOTIVATIONAL PREDICTORS OF STUDENT'S PSYCHOLOGICAL WELL-BEING

*This work was supported by the RA Science Committee and Russian Foundation for Basic Research (RF) in the frames of the joint research project SCS 20RF-164 and RFBR 20-513-05014 accordingly.*

*Serobyán A. K., Grigoryan A. K., Khachatryan N. G. (Yerevan State University, Yerevan, Armenia)*

*Yerofeyeva V. G. (HSE, Moscow, Russia)*

*astghiks@ysu.am, ani\_grigoryan@ysu.am, n\_khachatryan@ysu.am, yerofeyeva.victoria@yandex.ru*

*Ներկայացման ամս. 03.08.2021*

*Գրախոսման ամս. 14.08.2021*

*Տպագրության ընդունման ամս. 15.09.2021*

The purpose of this study was to investigate gender differences in cognitive and motivational factors of achieving success-predetermining student's psychological well-being. The Warwick-Edinburgh Mental Well-Being scale (WEMWBS) was used to measure psychological well-being.

The mindset and promotion/prevention regulatory focus were considered as cognitive and motivational predictors. The study was based upon a sample of 415 students ( $M_{age}=20.4$ ,  $SD_{age}=2.568$ ), of whom 63.5% were women. Two regression models were developed separately, for men and women to identify gender differences in factors contributing to psychological well-being. The promotion focus was a significant predictor for men's psychological well-being. Women's psychological well-being was determined by growth mindset and promotion focus. The prevention focus negatively predicted women's psychological well-being. The results of this study replicated the findings of other studies, that promotion focus has a predictive role in psychological well-being, at the same time revealing gender differences in cognitive and motivational factors of achieving success.

**Keywords:** *Psychological well-being, mindset, self-regulatory focus, regression model.*

DOI: <https://doi.org/10.46991/SBMP/2022.5.1.107>

Ուսանողների՝ կյանքի որակին ուղղված ուսումնասիրություններն արդիական են դառնում ժամանակակից մարտահրավերների պայմաններում. ուսումնական գործունեության հետ կապված լարումների (ընթացիկ գնահատումներ, ռոտացիայի երևույթը, քննական սթրես և այլն) հաղթահարում, ու-

ման և աշխատանքի համատեղում, ընտանիքի ստեղծում, ակտիվ մասնակցություն հասարակական տարբեր գործընթացներին, ներգրավվածություն քաղաքացիական շարժումներում և այլն: Այս տարիքը համընկնում է վերջին քսանամյակում ուսումնասիրվող նոր տարիքային փուլի հետ՝ ձևավորվող հասունություն (emerging adulthood), որը դիտարկվում է որպես առանձին փուլ (18-25 տարեկան) և ընկած է ուշ դեռահասության և երիտասարդության միջև: Ձևավորվող հասունությունն ինքնության փորձարկումների, անկայունության, եսակենտրոնության, կյանքի տարբեր ոլորտներում հնարավորությունների անցումային տարիք է, բնորոշվում է հոգեբանական բոլոր դրսևորումների ծայրահեղ ամբիվալենտությամբ և բազմազանությամբ, զարգացման ոչ միանշանակ հետագծով, քիչ կառուցվածքավորվածությամբ, դինամիկությամբ [2]: Այդ իսկ պատճառով ուսանողների հոգեկան առողջության և հոգեբանական բարեկեցության հիմնախնդիրների ուսումնասիրությունները խիստ անհրաժեշտ են: Մասնավորապես, Հայաստանում քիչ են ուսումնասիրություններ, որոնք ուղղված են դուրս բերելու սովորող երիտասարդների հոգեբանական բարեկեցությունը պայմանավորող գործոնները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրելու ուսանողների հոգեբանական բարեկեցությունը պայմանավորող անձի կոգնիտիվ և մոտիվացիոն գործոնները և դուրս բերելու սեռից կախված առանձնահատկություններ:

Հոգեբանական բարեկեցությունը հիմնականում սահմանվում է որպես դրական հուզական վիճակների (հեղոնիկ ասպեկտ) և անհատական ու սոցիալական կյանքում օպտիմալ արդյունավետությամբ գործառնության (էվդեմոնիկ ասպեկտ) համադրություն [9]: Վերջինս ենթադրում է նաև սեփական անհատականության գիտակցում, ինքնակարգավորում և սթրեսային իրավիճակների ու մարտահրավերների արդյունավետ հաղթահարման կարողություն [11]: Ըստ Կ. Ռիֆֆի՝ հոգեբանական բարեկեցության կոնցեպտուալ մոդելը բաղկացած է վեց հիմնական չափումներից. կյանքի նպատակի առկայություն, որը ցույց է տալիս, թե որքանով են մարդիկ զգում, որ իրենց կյանքը իմաստ/նպատակ և ուղղություն ունի, արդյո՞ք նրանք զգում են, որ ապրում են իրենց անձնային համոզմունքներին համապատասխան (ինքնավարություն), որքանով են նրանք օգտագործում իրենց պոտենցիալը և անձնային տաղանդները (անձնային աճ), որքան լավ են նրանք կառավարում իրենց կյանքի իրավիճակները (տիրապետում միջավայրին), նշանակալից ուրիշների հետ հարաբերությունների խորությունը (դրական հարաբերություններ), իրենց ես-ի մասին գիտելիքն, այդ թվում՝ անձնային սահմանափակումների ճանաչումն ու ընդունումը (ինքնաընդունում) [10]:

Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ինչպես անձնային, այնպես էլ սոցիալ-մշակութային տարբեր գործոններ ազդում են հոգեբանական բարեկեցության վրա, ընդ որում, կան գենդերային տարբերություններ վերջինիս ապրման հարցում: Մասնավորապես, պատանիների և երիտա-

սարդների շրջանում գենդերային տարբերություններ դուրս են բերվել բարեկեցության հուզական բաղադրիչի տեսանկյունից: Գենդերային սոցիալականացման տեսանկյունից ամրապնդվում են տարբեր դերային ակնկալիքներ, որը ևս ունենում է ազդեցություն տղաների և աղջիկների բարեկեցության վրա [5]:

Անձնային գործոնների մեջ, հատկապես կարգավորման ֆոկուսը՝ որպես ընդհանուր մոտիվացիոն կողմնորոշիչ, ազդում է կյանքի տարբեր ոլորտներում անձի բարեկեցության դրսևորման վրա, ինչպես օրինակ՝ աշխատանքից բավարարվածությունը, ընկերությունից, առօրյայից բավարարվածությունը: Առանձնացվում են կարգավորման՝ միմյանցից տարբերվող երկու համակարգեր՝ ըստ դրանց հիմքում ընկած բազային պահանջմունքների, անվտանգության պահանջմունք և աճի պահանջմունք: Անվտանգության հետ կապված կարգավորման համակարգը՝ կանխման ֆոկուսն է (prevention focus)՝ բացասական գործոններից մարդու խուսափողական վարքաձևը, իսկ աճի հետ կապված կարգավորման համակարգը՝ առաջխաղացման ֆոկուսն է (promotion focus)՝ դրական ելք ունենալու ձգտումը: Հաջողության ձգտման կողմնորոշում ունեցող անձիք ձգտում են աճի, զարգացման և հաջողությունների, նրանք մտահոգված են դրական արդյունքի առկայությամբ կամ բացակայությամբ: Նպատակները դիտարկվում են այս դեպքում որպես իդեալներ, և վարքն ուղղված է նոր բարձունքների նվաճմանը: Անհաջողությունից խուսափման կողմնորոշմամբ անձանց համար կարևոր են անվտանգությունն ու պատասխանատվությունը, նրանք անհանգստացած են բացասական արդյունքի առկայությամբ կամ բացակայությամբ [7]:

Ուսանողների ակադեմիական առաջադիմության տեսանկյունից վերջին տարիներին տարածում է ստանում սեփական ունակությունների վերաբերյալ երիտասարդների մտածելակերպի ուսումնասիրությունները [3]: Տեսության հեղինակները գտնում են, որ անհաջողության հակազդումը պայմանավորված է մտածելակերպով. ֆիքսված (սևեռուն, կարծրացած) մտածելակերպ (fixed mindset) և զարգացմանն ուղղված մտածելակերպ (growth mindset): Առաջինի դեպքում մարդը համոզված է, որ մտավոր ունակությունները չեն զարգանում և ոչինչ անել հնարավոր չէ, իսկ երկրորդի դեպքում՝ կա համոզվածություն, որ ջանքերի ու համառության միջոցով հնարավոր է զարգացնել մտավոր ունակությունները և ունենալ հաջողություն [3]: Այս բացահայտումներն առանձնահատուկ ակտուալ են կրթության ոլորտում. բանն այն է, որ կրթական գործընթացը նորի բացահայտման և յուրացման գործընթաց է: Այս տեսանկյունից, մտածելակերպի հայեցակարգը հեռանկարային է դառնում, քանի որ օգնում է հասկանալ սովորողների մոտիվացիայի, առաջադիմության և բարեկեցության հետ կապված հարցերը [4]: Մտածելակերպի և սուբյեկտիվ բարեկեցության կապի վերաբերյալ հետազոտությունները սակավաթիվ են: Հետազոտություններից մեկը ցույց է տալիս, որ զարգացմանն

ուղղված մտածելակերպի բարձր աստիճանը նպաստում է սուբյեկտիվ բարեկեցության արտահայտվածությանը: Մտածելակերպի երկու ձևերի և սուբյեկտիվ բարեկեցության արտահայտվածությունը նշանակալիորեն տարբերվում է աղջիկների մոտ, ի տարբերություն տղաների [6]:

### **Հետազոտության մեթոդներ և ընտրանք**

Հետազոտությանը մասնակցել են 415 ուսանող (Mun=20.4, SDun=2.568), որոնց 63.5%-ը աղջիկ: Հետազոտության մասնակից ուսանողների գերակշիռ մասը՝ մոտավորապես 91%-ը բակալավրիատի երկրորդ կուրսի ուսանողներ են: Մասնակիցների 60%-ը սովորում է վճարովի համակարգում:

Հետազոտության մասնակիցները լրացրել են հարցաթերթ, որում ընդգրկված են եղել հոգեբանական բարեկեցությունը, կոգնիտիվ և մոտիվացիոն գործոնները չափող հարցարաններ, ինչպես նաև ժողովրդագրական որոշ տվյալներ դուրս հանող հարցեր: Հոգեբանական բարեկեցությունը չափվել է Վարվիկ-Էդինբուրգի հոգեբանական բարեկեցության սանդղակով (Warwick-Edinburgh Mental Well-Being Scale՝ WEMWBS) [11]: Սանդղակը կազմված է 14 պնդումից, որոնք չափում են անհատական բարեկեցության մակարդակը կոնկրետ ժամանակահատվածի համար: Հարցման մասնակիցը գնահատում է յուրաքանչյուր պնդումը հինգաստիճանային սանդղակով «ոչ մի անգամ»-ից մինչև «ամբողջ ժամանակ»:

Ինքնակարգավորման վարքաձևերը, որոնք չափվել են Լոքվուդի՝ առաջխաղացման և անհաջողությունից խուսափման նպատակներին ուղղված սանդղակով [1]: Սանդղակը բաղկացած է 18 պնդումից, որոնց հետազոտվողը գնահատում է, թե որքանով է ճիշտ իր համար տվյալ պնդումը վեցաստիճանային գնահատման սանդղակով «ընդհանրապես ճիշտ չէ»-ից մինչև «շատ ճիշտ է» [8]: Հարցարանի սանդղակներն են հաջողության ձգտումը և անհաջողությունից խուսափումը:

Կոգնիտիվ գործոնները չափվել են Մտածելակերպի հարցարանով, որի սանդղակներն են ֆիքսված մտածելակերպը և զարգացմանն ուղղված մտածելակերպը [3]: Հարցարանը բաղկացած է 10 պնդումից, որոնք գնահատվում են հինգաստիճանային սանդղակով «ընդհանրապես ինձ նման չէ»-ից մինչև «ամբողջովին ինձ նման է»՝ ցույց տալով, թե որքանով է տվյալ պնդումը նման հետազոտվողին:

Տվյալների վիճակագրական վերլուծությունն իրականացվել է SPSS Statistics, Version 23.0 ծրագրով:

### **Արդյունքների վերլուծություն և մեկնաբանություն**

Նկարագրական վիճակագրության և միջինների համեմատության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում: Սուբյեկտիվ բարեկեցության, մտածելակերպի և ինքնակարգավորման վարքաձևերի սեռային տարբերությունների դուրս բերման համար իրականացվել է համեմատական վերլուծություն T Ստյուդենտի բանաձևով (անկախ խմբերի համար):

**Աղյուսակ 1.**

Հետազոտական տվյալների նկարագրական վիճակագրության արդյունքները

	Սեռ	Միջին արժեքներ M	Ստանդարտ շեղում SD	Կրոնբախի ալֆա $\alpha$	T Ստյուդենտ
Զարգացմանն ուղղված մտածելակերպ	իգ	19.7	3.326	0.637	0.696
	ար	19.4	3.942		
Ֆիքսված մտածելակերպ	իգ	12.3	3.707	0.579	0.752
	ար	12.0	4.082		
Հաջողության ձգտում	իգ	5.1	0.821	0.870	-2,654**
	ար	4.8	0.949		
Անհաջողությունից խուսափում	իգ	4.1	0.897	0.717	-3,518**
	ար	3.7	0.829		

$p^{**} < 0.01$

Ինչպես երևում է աղյուսակից, չկան նշանակալի տարբերություններ սուբյեկտիվ բարեկեցության ( $t=0,277$ ;  $p=0,782$ ) և մտածելակերպի տեսակներով ( $t_{ֆիքսված}=-0,752$ ,  $p=0,452$ ;  $t_{զարգացմանն ուղղված}=-0,696$ ,  $p=0,487$ ) աղջիկների և տղաների միջև: Նշանակալի տարբերություններ դուրս են բերվել կարգավորման ֆոկուսի դեպքում՝ հաջողության ձգտման ( $t=-2,654$ ,  $p=0,008$ ) և անհաջողությունից խուսափման ( $t=-3,518$ ,  $p=0,001$ ): Աղջիկների մոտ այդ վարքաձևերն ավելի բարձր են արտահայտված ( $M_1=5,079$ ;  $M_2=4,127$ ), քան տղաների մոտ ( $M_1=4,779$ ;  $M_2=3,718$ ):

Սեռով պայմանավորված հոգեբանական բարեկեցությանը նպաստող գործոնների տարբերությունների բացահայտման նպատակով կառուցվել են երկու ռեգրեսիոն մոդելներ՝ տղաների և աղջիկների համար առանձին-առանձին: Իրականացվել է գծային ռեգրեսիա, որտեղ կախյալ փոփոխական ընտրվել է հոգեբանական բարեկեցությունը, իսկ անկախ փոփոխականներ են հանդիսացել մտածելակերպը և ինքնակարգավորման վարքաձևերը (տղաների դեպքում մոդելի կանխորոշիչ նշանակությունը՝ adjusted R Square=0.29, իսկ աղջիկների դեպքում՝ adjusted R Square=0.24):

Արդյունքներից պարզ է դառնում, որ տղաների հոգեբանական բարեկեցության համար պայմանավորող գործոն է միայն առաջխաղացման ֆոկուսը ( $B=0.338$ ,  $p<0.001$ ): Իսկ աղջիկների դեպքում հոգեբանական բարեկեցու-

թյան համար պայմանավորող գործոններ են ինչպես զարգացմանն ուղղված մտածելակերպը ( $B=0.043$ ,  $p<0.001$ ), այնպես էլ ինքնակարգավորման երկու վարքաձևերը: Ընդ որում, առաջխաղացման ֆոկուսը դրական պայմանավորող գործոն է բարեկեցության համար ( $B=0.254$ ,  $p<0.001$ ), իսկ կանխման ֆոկուսը՝ բացասական ( $B=-0.116$ ,  $p<0.05$ ):

Այսպիսով՝ վերլուծությունը դուրս է բերել սովորող երիտասարդների՝ սուբյեկտիվ բարեկեցության պայմանավորող գործոնների սեռային տարբերություններ: Հատկանշական է, որ և՛ տղաների, և՛ աղջիկների համար առաջխաղացման կարգավորման ֆոկուսը նպաստում է սուբյեկտիվ բարեկեցությանը, մինչդեռ անհաջողությունից խուսափման ֆոկուսը բացասական դեր ունի աղջիկների սուբյեկտիվ բարեկեցության համար: Ավելին, աղջիկների սուբյեկտիվ բարեկեցությանը նպաստում է նաև զարգացմանն ուղղված մտածելակերպը: Ստացվում է, որ տղաների դեպքում սուբյեկտիվ բարեկեցության համար պայմանավորող է միայն մոտիվացիոն գործոնը, իսկ աղջիկների դեպքում և՛ կոգնիտիվ, և՛ մոտիվացիոն գործոնները:

Ստացված արդյունքները հաստատում են այլ ուսումնասիրության արդյունքներ, մասնավորապես, որ վարքի կարգավորման առաջխաղացման ֆոկուսը և զարգացմանն ուղղված մտածելակերպը նպաստում են հոգեբանական բարեկեցությանը: Սակայն ստացված արդյունքները դուրս են բերում նաև գենդերային տարբերություններ: Այն որ խուսափման ֆոկուսը բացասական նշանակություն ունի հոգեբանական բարեկեցության համար միայն աղջիկների դեպքում, կարելի է բացատրել նրանով, որ աղջիկների սոցիալականացման մեջ ավելի շատ են սահմանափակումներ և պարտավորություններ: Միևնույն ժամանակ մեզանում աղջիկները ներկայում ավելի շատ են ձգտում հաջողության և չեն սահմանափակվում միայն ավանդական դերային մոդելներով: Դա իրենց ստիպում է աշխատել սեփական կարողությունների վրա, ինչը կարող է խթանել զարգացմանն ուղղված մտածելակերպի ձևավորմանը: Ուսման մեջ հաջողություններ գրանցելն ավելի նշանակալի է աղջիկների համար, և դա մեծացնում է սուբյեկտիվ բարեկեցության զգացումը: Տղաների համար ուսման մեջ հաջողություններ ունենալն այդքան էլ գրավիչ կամ նշանակալի չէ, ինչը թելադրված է գենդերային դերային ակնկալիքներով: Ստացված արդյունքները կարիք ունեն իհարկե հետագա հաստատման՝ հաշվի առնելով այլ կոգնիտիվ և ժողովրդագրական գործոններ ևս, ինչպես օրինակ՝ աղջիկների և տղաների գենդերային պատկերացումները և համոզմունքները, ընտանիքի արժեքային կողմնորոշումները, ուսանողների ակադեմիական առաջադիմությունը և զուգահեռ զբաղվածությունը, նյութական ապահովվածության աստիճանը, ինչպես նաև բնակավայրը:

### Գրականություն

1. **Abu ELSamen, Amjad & Mowen, John & Fang, Xiang** Examining the Construct Validity of the Lockwood Goal Orientation Scale, 2015. 10.1007/978-3-319-11797-3\_11.
2. **Arnett, J. J.** Emerging Adulthood: What is it, and what is it good for? // Child development perspective, 1 (2), 2007, pp. 68-73
3. **Dweck, C. S.** Mindset: The new psychology of success. New York House Inc., 2006.
4. **Dweck, Carol & Yeager, David.** Mindsets: A View from Two Eras. Perspectives on Psychological Science. 14. 2019. 174569161880416. 10.1177/1745691618804166.
5. **Esteban-Gonzalo, S., Esteban-Gonzalo, L., Cabanas-Sánchez, V., Miret, M., & Veiga, O. L.** (2020). The Investigation of Gender Differences in Subjective Wellbeing in Children and Adolescents: The UP&DOWN Study. International journal of environmental research and public health, 17(8), 2732. <https://doi.org/10.3390/ijerph17082732>
6. **Gunnarsdóttir S.** Growth vs. fixed mindset : the relationship between student's mindset, resilience and psychological well-being, <http://hdl.handle.net/1946/39287>
7. **Higgins E. T.** Value from regulatory fit. Current Directions in Psychological Science, 14, 2005, pp. 209 - 213.
8. **Lockwood, P., Jordan, C. H., & Kunda, Z.** Motivation by positive or negative role models: Regulatory focus determines who will best inspire us. Journal of Personality and Social Psychology, 83(4), 2002, pp. 854–864. <https://doi.org/10.1037/0022-3514.83.4.854>
9. **Ryan RM, and Deci EL.** On happiness and human potential: a review of research on hedonic and eudemonic well-being. Annual Review of Psychology, 52, 2001, pp. 141-166.
10. **Ryff C. D.** (2014). Psychological well-being revisited: advances in the science and practice of eudaimonia. Psychotherapy and psychosomatics, 83(1), 10–28. <https://doi.org/10.1159/000353263>
11. **Stewart-Brown, Sarah & Platt, Stephen & Tennant, Alan & Maheswaran** Hendramoorthy & Parkinson, Jane & Weich, Scott & Tennant, Ruth & Taggart, Frances & Clarke, Aileen. The Warwick-Edinburgh Mental Well-being Scale (WEMWBS): A valid and reliable tool for measuring mental well-being in diverse populations and projects. Journal of Epidemiology and Community Health. 65. A38-A39. 2011. 10.1136/jech.2011.143586.86.

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԿՈԳՆԻՏԻՎ ԵՎ ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ  
ՀԱՄԵՍԱՑՈՒԹՅՈՒՆ ՏՂԱՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

*Հետազոտությունը իրականացվել է ՀՀ ԿԳ-ի 20RF-164 և ՀՀՈՀ (ՌԴ) 20-513-05014 գիտական համալսարանի ծրագրի շրջանակներում:  
Սերոբյան Ա. Կ., Գրիգորյան Ա. Կ., Խաչատրյան Ն. Գ. (Երևանի  
պետական համալսարան, Երևան, Հայաստան)  
Երոֆեևա Վ. Գ. («Տնտեսագիտության բարձրագույն համալսարան» ԱՀՀ,  
Մոսկվա, Ռուսաստան)*

Հետազոտությունն ուղղված է ուսումնասիրելու ուսանողների հոգեբանական բարեկեցությունը պայմանավորող անձի կոգնիտիվ և մոտիվացիոն գործոնների տարբերությունը՝ կախված սեռից: Հոգեբանական բարեկեցությունը չափվել է Վարվիկ-Էդինբուրգի հոգեբանական բարեկեցության սանդղակով (Warwick-Edinburgh Mental Well-Being Scale՝ WEMWBS): Որպես հոգեբանական բարեկեցության պայմանավորող գործոններ՝ դիտարկվել են մտածելակերպը և ինքնակարգավորման վարքաձևերը: Հետազոտությանը մասնակցել է 415 ուսանող ( $M=20.4$ ,  $SD=2.568$ ), որոնց 63.5%-ը աղջիկ:

Սեռով պայմանավորված հոգեբանական բարեկեցությանը նպաստող գործոնների տարբերությունների բացահայտման նպատակով կառուցվել են երկու ռեգրեսիոն մոդելներ՝ տղաների և աղջիկների համար առանձին-առանձին: Տղաների հոգեբանական բարեկեցությունը դրականորեն պայմանավորող մոտիվացիոն գործոն է միայն առաջխաղացման, իսկ աղջիկների դեպքում՝ առաջխաղացման և կանխարգելման ֆոկուսները: Մտածելակերպը նշանակալի գործոն չէ տղաների հոգեբանական բարեկեցության համար, սակայն զարգացմանն ուղղված մտածելակերպը դրական նշանակություն ունի աղջիկների հոգեբանական բարեկեցության համար: Ուսումնասիրության արդյունքները հաստատում են այլ ուսումնասիրությունների արդյունքներ, ըստ որի առաջխաղացման ֆոկուսը կարևոր կանխորոշող գործոն է հոգեբանական բարեկեցության համար, սակայն միևնույն ժամանակ մատնանշում են գենդերային տարբերություններ հոգեբանական բարեկեցության կոգնիտիվ և մոտիվացիոն գործոնների միջև:

**Հանգուցային բառեր՝** *հոգեբանական բարեկեցություն, մտածելակերպ, ինքնակարգավորման ֆոկուս, ռեգրեսիոն մոդել*



## ГЕНДЕРНЫЕ РАЗЛИЧИЯ КОГНИТИВНЫХ И МОТИВАЦИОННЫХ ПРЕДИКТОРОВ ПСИХОЛОГИЧЕСКОГО БЛАГОПОЛУЧИЯ СТУДЕНТОВ

*Исслед. вып. при финансовой поддержке КН РА и РФФИ (РФ) в рамках совместной научной программы 20RF-164 и 20-513-05014 соответственно.*

*Серобян А. К., Григорян А. К., Хачатрян Н. Г. (Ереванский государственный университет, Ереван, Армения)  
Ерофеева В. Г. (НИУ ВШЭ, Москва, Россия)*

Целью данного исследования было изучение гендерных различий в когнитивных и мотивационных факторах достижения успеха, предопределяющих психологическое благополучие учащихся. Для измерения психологического благополучия использовалась шкала психического благополучия Уорика-Эдинбурга.

В качестве когнитивных и мотивационных предикторов рассматривался образ мышления и регуляторный фокус. Исследовательская выборка состояла из 415 студентов ( $M_{возр} = 20,4$ ,  $SD_{возр} = 2,568$ ), из которых 63,5% составляли женщины. Был проведен регрессионный анализ отдельно для мужчин и женщин для выявления гендерных различий в факторах, способствующих психологическому благополучию. Фокус продвижения был позитивным предиктором психологического благополучия у мужчин. Психологическое благополучие женщин определялось установкой на рост и фокусом продвижения. Фокус предупреждения был негативным предиктором психологического благополучия у женщин.

Результаты этого исследования подтверждают результаты других исследований, что фокус продвижения играет прогностическую роль в психологическом благополучии, в то же время выявляя гендерные различия в когнитивных и мотивационных факторах достижения успеха.

**Ключевые слова:** *психологическое благополучие, образ мышления, регуляторный фокус, регрессионная модель.*